

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
« Թ Ե Գ Ե Յ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն »
Հ ի մ ն ա դ ր ա մ
REPUBLIC OF ARMENIA
« T E K E Y A N C E N T R E »
F u n d

Հիմնադրամի նախագահ
ԵՐԵՎԱՆ, ԽԱՆՋՅԱՆ 50
հեռ./փ: (+374-1)-573057, 572422. fax/ֆաքս 555783

Fund Chairman V. Ouzounian
YEREVAN, KHANJIAN str. 50
e-mail: tcenter@arminco.com

ՀՀ Սփյուռքի նախարար
Տիկ. Հ. Հակոբյանին


26 սեպտեմբերի, 2011
Երեւան

Հարգարժան տիկ. Հակոբյան,

Շնորհավորում եմ Ձեզ ինչպես Հայաստանի Հանրապետության անկախության 20 ամյակի, այնպես էլ Հայաստան- Սփյուռք համաժողովի հաջող անցկացման կապակցությամբ: Բավական ուշադրությամբ հետևելով համաժողովի վերաբերյալ լրատվություններին, ցանկանում եմ նշել, որ այն մեծ կարեւորություն ունի մեր ժողովրդի տարբեր հատվածների եւ հայրենիքի միջեւ կապերի ամրապնդման գործում, որտեղ ի հարկե իր մեծ դերն ունի ՀՀ սփյուռքի նախարարությունը:

Արդեն ավանդույթ դարձած այս համաժողովները սփյուռք –հայրենիք տեւական համագործակցության ամենակարեւոր նվաճումներից են, որի ժամանակ ամփոփվում է կատարված աշխատանքն ու նախանշվում են գալիք ծրագրերը: Ուրախությամբ կարելի է արձանագրել նաեւ այն փաստը, որ մասնակցության տեսակետից ներկա համաժողովն ավելի ընդգրկուն եւ ներկայացուցչական էր: Համոզված պետք է նշեն, որ Ձեր մտավախությունը մասնակիցների նվազագույն թվի վերաբերյալ այլեւս անհիմն է եւ մնում է անցյալում:

Այնուամենայնիվ, ողջունելով սփյուռքի մի շարք նոր կազմակերպությունների եւ անհատների մասնակցությունը, պիտի խնդրեմ նաեւ հնարավորինս մոռացության չձառնել այլ կազմակերպություններին, ինչպես օրինակ Լոնդոնի Թեքեյան Խնամակալ Մարմինն է /Tekeyan Trust London/, որն իր գրեթե 40-ամյա հայանպաստ գործունեությունն է ծավալում ինչպես սփյուռքում, այնպես էլ Հայաստանում: Բրիտանահայ կազմակերպությունների թիվն այսօր բավական փոքր է եւ չի կարող համեմատվել հայաշատ գաղութների հետ, այդուհանդերձ այդ կազմակերպություններն, ըստ իս, մեծ դեր են խաղում իրենց գործունեությամբ եւ հայրենիքի հետ սերտ մշակութային եւ գործարար կապերով:



Ի թիվս բազում այլ ծրագրերի, Լոնդոնի Թեքեյան Խնամակալ Մարմնի հաջողված ծրագրերից մեկն էլ հանդիսանում է Թեքեյան Կենտրոնի կառուցումը Երեւանում եւ «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի հիմնումը, որը սփյուռքի առաջին ձեռնարկումներից մեկն էր նորանկախ Հայաստանում: Այդ իրադարձության նույնպես 20 ամյակը մենք հանդիսավորությամբ նշեցինք այս տարվա սեպտեմբերի 10-ին Երեւանի Թեքեյան Կենտրոնում: Ի հարկե հասկանում ենք Ձեր բազմազաղ վիճակն այդ օրերին, այնուամենայնիվ ափսոսում ենք, որ սփյուռքի նախարարության որեւէ ներկայացուցիչ չկարողացավ ներկա գտվել այդ հանդիսությանը:

Այսօր մեր հիմնադրամը լիովին լծվել է իր հայրենանվեր առաքելությանը եւ իրականացնում է մի շարք ծրագրեր, ինչի մասին Ձեզ ներկայացրել էինք 2010-ին կայացած մեր հանդիպմանը: Ներկայումս այդ ծրագրերն ավելի ծավալուն եւ բազմաբնույթ են դարձել, ինչի մասին մանրամասն տեղեկատվություն է գետեղված մեր համացանցային www.tekeyancentre.am կայքում:

Ավարտելով, ցանկանում եմ հույս հայտնել, որ մոտ ապագայում ավելի կսերտանա սփյուռքի նախարարության եւ մեր երկու կազմակերպությունների համագործակցությունը: Կրկին անգամ շնորհավորում եմ Ձեզ եւ մաղթում նորանոր հաջողություններ հայրենիք –սփյուռք կապերի ամրապնդման գործում:

Հարգանքներով՝



Վարդան Ուզունյան

Լոնդոնի Թեքեյան Խնամակալ Մարմնի պատվավոր քարտուղար
«Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի նախագահ